

ՄԻ ՀԱՇՎԵՐԳԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ա. Ե.

Մանկական բանահյուսության մեջ հաշվերգը ամենաակտիվն է, գործնականում միակ կենդանի բանահյուսական ժանրը: Մյուսներից շատերը՝ հանելուկը, շուտասելուկը, հեքիաթը, անհետացել են կամ քարացել-գրականացել: Հաշվերգերը ստեղծում և տարածում են երեխաները, դրանք չեն գրառվում և չեն հետաքրքրում մեծերին, որոնք դրանցում իմաստ և օգտակար որևէ բան չեն տեսնում: Եվ հենց այդ պատճառով է, որ հաշվերգը վերապրել և հասել է մեզ¹:

Հաշվերգերը կարելի է տարբերակել երկու խմբի՝ մի մասում առկա են անիմաստ բառեր, մյուսում՝ ոչ: Այդ սկզբունքը կիրառվել է նաև մասնագիտական գրականության մեջ՝ սկսած առաջին իսկ ուսումնասիրողներից²: Բհարկե, տարբեր մասնագետներ առաջարկել են նաև այլնայլ բաժանումներ, բայց սա է առավել ակնհայտը³: Անիմաստ, անհասկանալի բառերը և դրանք պարունակող տեքստերը կարելի է կոչել «հնարածին» (ռուս. *заумный*, անգլ. *gibberish*). Հնարածին տեքստը ծիսական խոսքի մի տարատեսակ է, ռիթմիկ հանգավորված, անհասկանալի, աղավաղված բառերի անիմաստ հավաքածու, որը կիրառվում է սրբազան և մոգական իրադրություններում: Երեխաների կողմից առանձնապես սիրված են հենց հնարածին հաշվերգերը: Ընդ որում, դրանցում այդ տարրերը ամենից հաճախ ներկայացնում են այլ լեզվի բառերի աղավաղված ձևեր⁴:

¹ Троицкая Т. С. Считалки. <http://setilab.ru/troi/wp-content/uploads/2008/06/schitalki1.pdf>.

² Bolton H. C. *The Counting-out Games of Children: Their Antiquity, Origin, and Wide Distribution*, London, 1888, p. 23. <http://archive.org/details/countingourhyme00bolt>. Հետաքրքիր է, որ Հ. Բոլտոնի գրքում ներկայացված են նաև հայկական, հայ-թուրքական [օսմանյան կայսրության տարածքներից (էջ 12-14)] և բուլղարական մի շարք հաշվերգեր (էջ 12-15, 64-66):

³ Այսպես, տարբեր հեղինակներ հաշվերգերը ստորաբաժանել են ըստ մի շարք այլ հատկանիշների՝ առաջին տողի, թվական պարունակող, պոմոետային, կոմոլյատիվ, տրամաբանական, անտրամաբանական և այլն, միշտ առանձնացնելով անհասկանալի բառեր պարունակող տեքստերը: Ռուսական հաշվերգերի ստորաբաժանումների սկզբունքների վերաբերյալ տե՛ս Мельников М. Н. *Русский детский фольклор*, М., 1987, с. 132-136, հայկականների մասին՝ Գրիգորյան Ռ., Հայ մանկական բանահյուսություն (ժողովրդական օրոքոցային և մանկական երգեր), Ե., 2002, էջ 97-102:

⁴ Левкиевская Е. Е. *Заумь. Славянские древности. Этнолингвистический словарь*, т. 2, М., 1999, с. 279, 280. Մանկական հնարածին տեքստերի վերաբերյալ ռուսական գիտության մեջ տե՛ս, օրինակ, Виноградов Г. С. *Русский детский фольклор*, кн. 1: *Игровые прелюдии*, Иркутск, 1930; Мерлин В. В. О «заумном языке» детских считалок. *Литература и фольклор Урала, Пермь*, 1978, с. 29-40; Орел В. Э. К объяснению некоторых «вырожденных» славянских текстов. *Славянское и балканское языкознание*:

Խորհրդային բանագիտության զարգացումը մեծապես պայմանավորված է եղել գաղափարախոսությամբ և կադապարներով: Խորհրդային բանագետը ոչ այնքան հետազոտող էր, որքան մշակութային ժառանգության կրող, նա ոչ թե ուղղակի ուսումնասիրում էր իր առարկան, այլ գնահատում և պահպանում: Ելնելով մանկավարժական, գեղագիտական, քաղաքական և գաղափարախոսական չափանիշներից՝ խորհրդային բանագետը շրջանցում և հաշվի չէր առնում բանահյուսության բազմաթիվ ստեղծագործություններ, ժանրեր և նույնիսկ ողջ բաժիններ (օրինակ, բանակային բանահյուսություն, սադիստական ոտանավորներ, «սև հումոր», մոգական տեքստեր, անեկդոտներ, հայեցողություններ և այլն): Այդպիսի ուսումնասիրություններում կենդանի իրականությունը փոխարինվում էր մի տեսակ անիրական «կոնստրուկտով», որը գոյություն ուներ կարծես ժամանակից ու տարածությունից դուրս, մշակութային հավերժական արժեքների աշխարհում⁵: Հայաստանում համախորհրդային ընդհանուր կադապարին գումարվում էր ևս մեկ՝ այսպես ասած, փոքր՝ կայսրություններում ճնշված ազգի մշակույթի պահպանման գործուն. ընդունված էր գրանցել, քննել և գնահատել առավելապես արխայիկ և ազգային արմատներով նմուշները:

Մեզանում մանկական բանահյուսությամբ զբաղվել է Ռոզա Գրիգորյանը, որը համակարգել և հրատարակել է մեծաքանակ նյութ⁶: Շատ հաշվերգեր ներկայացված են բազմաթիվ տարբերակներով, բայց չի հիշվում հայկական հաշվերգերից ամենահայտնին ու ամենատարածվածը՝ Ալա-բալա-նիցա-ն (ինչպես նաև մանկական բանահյուսության ժամանակակից այլ նմուշներ): Ահա հաշվերգի ամենատարածված տարբերակը.

Ալա-բալա-նիցա,
Դու(ր)ս կաբանիցա,
Հեյ գիդի Վանչո,
Նաշ կապիտանչո,
Փալանչո:

Հաշվերգը ունի շատ տարբերակներ՝ օրինակ, դուզ կաբանիցա/կապանիցա, Բանչո, Փանչո, Մանչո, ռաս/ռազ կապիտանչո, չորրորդ տողը կարող է չլինել և այլն: Բանահավաք Արմեն Սարգսյանը գրանցել է տասնյակ տարբերակներ Հայաստանի՝ գործնականում բոլոր շրջաններից: Այն հայտնի

Карпато-восточнославянские параллели: структура балканского текста, М., 1977, с. 318-324. **Топорков Л. А.** Заумь в детской поэзии. Русский школьный фольклор: от «вызываний» Пиковой дамы до семейных рассказов, М., 1998, с. 578-604.

⁵ **Белоусов А. Ф., Головин В. В., Кулешов Е. В., Лурье М. Л.** Детский фольклор: итоги и перспективы изучения. Первый Всероссийский конгресс фольклористов (сб. докладов, т. 1, М., 2005, с. 217).

www.ruthenia.ru/folklore/luriem10.pdf.

⁶ **Գրիգորյան Ռ.**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Ե., 1970, նույնի՝ Հայ մանկական բանահյուսություն:

է նաև Արցախում և Վրաստանում (Թբիլիսի, Ջավախք): Տեքստն ունի մի շարք ոչ պարտադիր շարունակություններ, օրինակ՝

Չո-չո-չո, կամ՝ Մոլոկանի պոպոնչո:
Փալանչո: Փալանչոն էլ մի բան չի,
Գնա հորդ/մորդ կանչի:

Մրա առաջին տողը կարող է չլինել, իսկ հոր կամ մոր փոխարեն ասվում է որևէ անուն (Վանոյին, Մարոյին և այլն): Մրան կարող են հաջորդել այլ շարունակություններ (Մերդ գնաց բազար, Ջեբը լիքը գազար..., կամ՝ Մարոն գնաց թատրոն, Ջեբը լիքը պատրոն...):

Փորձենք հասկանալ, թե ինչպես կարող էր իմաստավորվել այս հաշվերգը հայաստանյան իրականության մեջ: Ժանրի համատեքստում ալա-բալա-ն, ակնհայտորեն, ակնարկում է հաշվերգերում հաճախ հանդիպող այբուբենի առաջին տառերը՝ ա, բ⁷: Ընդհանրապես, հնարածին հաշվերգերի հիմնական տարրն են կազմում զույգ կամ «երկմաս» բառերը՝ հմմտ. օրինակ, հայ. ակտան-մակտան, ատատե-բատատե: Դրանց ամենատարածված մոդելը, որը վերաբերում է ընդհանրապես ռիթմին, այսպիսին է՝ երկրորդ բառը կրկնում է առաջինը, սկզբից հավելված մի նոր հնչյուն, սովորաբար՝ շրթնային բաղաձայն (մ, բ, պ, փ)⁸: Կարելի է հիշել բազում այլալեզու օրինակներ՝ բուլղար. оңче-бонче, ռուս. аты-баты, գերմ. ene-mene, անգլ. eeny-meeny, թուրք. alem-belem, արաբ. hakara, bakara⁹: Ըստ այդմ, ալա-բալա-ն, անկախ իր ծագումից, համապատասխանում է հնարածին հաշվերգերի սկզբնամասի երկմաս տարրի ամենատարածված մոդելին:

Ալա-բալա արտահայտություն արձանագրված չկա ոչ հայերեն գրական լեզվում, ոչ բարբառներում¹⁰: Իսկ -նիցա վերջավորությունը ողջ արտահայտությանը, անկախ առաջին բառերի ծագումից, սլավոնական ձևավորում է ենթադրում (-նիցա, -իցա ձևերը սլավոնական լեզուներում

⁷ Հայկական այբուբենի տառերով հաշվերգեր տե՛ս Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրոորցային և մանկական երգեր, էջ 218-220:

⁸ Мерлин В. В., նշվ. աշխ. էջ 33, այս հարցի վերաբերյալ առավել ընդհանրացված՝ նույնի՝ Актуальное членение и рифма. Вопросы стилистики. Межвузовский научный сборник, Саратов, 1980, с. 50-57.

⁹ Այդպիսի բազմաթիվ օրինակներ հայկական հաշվերգերում (տե՛ս Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրոորցային և մանկական երգեր, էջ 187-220) օտարալեզու օրինակներ՝ Bolton H. C., նշվ. աշխ., էջ 45-46:

¹⁰ Կա բալա «փորձանք» բառը, ծագումով՝ արաբերեն, որը մտել է թուրքերեն, պարսկերեն, վրացերեն և այլ արևելյան լեզուներ, այդ թվում և՛ հայկական բարբառներ: Սա, տեսականորեն, կրճատ կրկնությամբ, կարող էր տալ ալա-բալա, ինչպես ունենք ալա-թալան, բայց այդպիսի ձև չկա: Մրա հետ կապված է ալալու բալալու «փորձանքից անպակաս» արտահայտությունը (Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001, էջ 12), որը թեև շատ նման է ալա-բալային, բայց նույնական չէ և կապ չունի Ալա-բալա-նիցայի հետ:

տարածված ածանց/ վերջավորություններ են, հմնտ. *чёрнильница*, *кириллица* և այլն): Կան նման սկզբնամասերով հայկական հաշվերգեր՝ *ալնիս-բալնիս*¹¹, *ալիս-պալիս*¹², *ալ-ալ*, *ալ-փալա*¹³, որոնք տարբեր են Ալա-բալա-նիցա-ից¹⁴: Հայերենում կա ալ-բալ «կարմիր կանաչ», որից՝ ալ-բալ հազնել «գուզվել»¹⁵, ալաբուլա «խայտաբղետ», «տարօրինակ, կասկածելի»¹⁶: Կա և բալաք «խատուտիկ, սև ու կարմիր կամ սև ու սպիտակ խառն (գույն)»¹⁷ և ալաք-բալաք, որը մեկնաբանվում է «գույնզգույն կամ գուլ-գուլ» (Բաֆթու «Կայծեր» վեպում)¹⁸: Վրացերենում հայտնի է *alabala* (აღაბალა) բառը՝ 1. «ով չի դադարում քայլել, քայլում է մեծ քայլերով» և 2. «իրարանցում, խառնաշփոթություն» իմաստներով¹⁹: Սրանց ծագումը պետք է որ թյուրքական լինի: Համաթյուրքական *ala* «բազմագույն, խայտաբղետ» արմատը ձևավորում է հանգավորվող բարդություններ *b-n* սկսվող երկրորդ մասով, հավանաբար կապված *bulga*- «խառնվել, անկարգության հասցնել» արմատի հետ: Թյուրքական լեզուների մի մասում այդ բարդությունները՝ *alabula*, *alan bulan*, *alag bulaq*, *alay balay*, *alay bolay* և այլն, նշանակում են «բազմագույն», մյուսներում՝ «աղմուկ, խառնաշփոթ», «անմտություն, անհեթեթություն» և այլն (դրանցից մեկից էլ, նախաձայն *h-*ի հավելումով, ծագած է համարվում և անգլ. *hullabaloo* /հա լըբըլո / «աղմուկ, խառնաշփոթ» բառը)²⁰: Այսպես, օսմանյան թուրքերենում հայտնի են *allaq* *bulaq*, *alakbulak*,

¹¹ Աճառյան Հ., Հայերեն գաւառական բառարան (Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, 1913, էջ 52):

¹² Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, էջ 201:

¹³ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 1, Ե., 2001, էջ 11:

¹⁴ Ըստ լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանի, Ալա-բալա-նիցա-ն կարող էր ծագել արևմտահայկական ավանդական հաշվերգի սկզբնամասից՝ *ալնիս-բալնիս* > *ալնից-բալնից* > *ալա-բալա-նիցա* (2013 թ. փետրվարի 10-ի անձնական նամակ): Այդ զարգացումը միանգամայն հնարավոր է տեսականորեն, բայց Ալա-բալա-նիցա-ն, միևնույն է, բուլղարական փոխառություն է: Իսկ *ալնիս-բալնիս*, *ալիս-պալիս*, *ալ-փալա* ձևերը, հնարավոր է, որ *ալա-բալա-ի* հետ միևնույն նախատիպի տարբերակներ են:

¹⁵ Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 9:

¹⁶ ՀԼԲԲ, հ. 1, էջ 11:

¹⁷ Աճառյան Հ., Հայերեն գաւառական..., էջ 165, Մալխասյան Ս., Հայերենի բացատրական բառարան, հ. I, Ե., 1944, էջ 316:

¹⁸ http://www.eanc.net/EANC/library/Fiction%5COriginal%5CRaffi%5CKayser_I.htm?page=16&interface_language=en.

¹⁹ Amirejib R., Enoch R., Hewit G., Jashi D., Kiknadze Z., Tuite K. *A Comprehensive Georgian-English Dictionary*. Vol. I, London, 2006, p. 39. bib.convdocs.org/docs/42/41449/-conv_1/file1.pdf.

²⁰ Sinor D. *Hullabaloo. Comparative-Historical Linguistics: Indo-European and Finno-Ugric. Papers in Honor of Oswald Szemerényi III*, edited by Bela Brgyanyi and Reiner Lipp. Amsterdam-Philadelphia, 1993, p. 553-558. http://books.google.am/books?id=kSmaBmG_y-C8C&printsec=frontcover&hl=ru#v=onepage&q&f=false.

allaq mallaq «անկարգություն, խառնաշփոթ» ձևերը: Ակնհայտ է, որ դրանց տարբերակներից պիտի փոխառված լինեին հայ. բրբռ. ալ-բալ, ալաք-բալաք «գույնզգույն» և վրաց. alabala «խառնաշփոթ» արտահայտությունները: Բնչևէ, ալա-բալա պարունակող թուրքական հաշվերգ ինձ հայտնի չէ:

Դուրս կաբանիցա/ կապանիցա-ն հայերենում ոչինչ չի նշանակում: Որոշ տարբերակներում առաջին բառը հանդես է գալիս դուս (բրբռ. «դուրս») և դուզ (բրբռ. «ուղիղ») ձևերով, որոնք նույնպես որևէ իմաստ չեն տալիս տողին: Կաբանիցան կարող է պատկերացվել ռուս. кабан «վայրի խոզ» բառի մի արհեստական՝ ալա-բալա-նիցա-ի հետ հանգավորված ածանցյալը:

Հեյ գիդի-ն, թեև մեզանում գրվում և իմաստավորվում է որպես «հեյ գիտի», իբր «գիտենալ» բառից, իրականում թուրքական զգացմունքային բացականչություն է, որը նույն իմաստով փոխառվել է մեզանում²¹: Բացի այդ, ակնարկվում են այբուբենի հաջորդ տառերը՝ գ, դ: Վանչո-ն, հայկական համատեքստում, պետք է կապվի համահունչ անձնանունների հետ, հմմտ. հայ. Վանիկ՝ Հովհաննես-ի կրճատումից (Հովանիկ>Վանիկ)²², հմմտ. և աստվածաշնչյան նույն անվան վրացական Վանո և ռուսական Վանյա փաղաքշական ձևերը, որոնք հայտնի են մեզանում: Վանչո-ն կարող էր առաջանալ Վանիկ/Վանո-ից, արհեստական -չո ածանցով, որը մեր խոսակցական լեզվում հաճախ է օգտագործվում՝ Գուրգենչո, Արամչո, Ռուբենչո²³:

Նաշ կապիտանչո-ն ռուսերենում իմաստավորվում է «մեր կապիտան», արհեստականորեն հանգավորված Վանչո-ի հետ: Կապիտան-ը հանդես է գալիս և այլ ժողովուրդների հաշվերգերում²⁴ (թիմի կապիտանն ընտրվում է հաշվերգով), իսկ մեզանում, Վանչո-ին համանուն Վանի-ի հետ, հայտնի է արդեն XIX դարից՝

Օվի, վունի, Վանի, Վանի,
Երևանի կապիտանի,

²¹ Աճառյան Հ., Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ (Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, 1902, էջ 203): Հմմտ. gidi «կավատ, անհավատարիմ կին ունեցող մարդ», բայց և «չար, չարաճճի» (փոխառված է նաև հայկական բարբառներում): Թուրքերենում «հայ/հեյ գիդի» բացականչությունը, ինչպես և մեզանում, շատ սովորական և անմեղ ձև է:

²² Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 37:

²³ Մրա ծագումը թերևս պետք է լինի ռուսական փաղաքշական -չիկ ածանցից (Вадимчик, Родиончик), որը մեզանում մանուկներին ուղղված՝ տարածված դիմելված է՝ Գուրգենչիկ, Արամչիկ, Ռուբենչիկ (կիրառելի՝ ոչ բոլոր անունների համար): Մա կոչական ձևում հաճախ կրճատվում, դառնում է -չո (թերևս, -չիկ-ի -իկ մասը՝ որպես համահունչ հայերեն -իկ նվագական ածանց ընկալելու հետևանքով), ապա, ո-ով վերջացող մյուս ձևերի (Գուզո, Կարո, Ռուբո) և չո-ով վերջացող կրճատված անունների (Խաչո, Վաչո) ազդեցությամբ՝ Գուրգենչո, Արամչո, Ռուբենչո և, ինչպես մյուսները, ձեռք է բերում նաև ոչ կոչական գործածություն:

²⁴ Հմմտ. օրինակ ...Sieben, acht, gute Nacht, neun, zehn, KapütՊո (գերմանական), Кан, кан, капитал, чем коней ты пропитал? (ռուսական), А Иван-копитан, чим ти коні копитав? (ուկրաինական):

Զվածեղի, դեղձիկունի,
Ով որ բռնի վեր քաշի²⁵:

Վերջին տողը՝ փալանչո-ն, կապված է թուրքերեն փալան «համետ, էշի թամբ, ծածկոց» և փալանչի «փալան պատրաստող վարպետ» բառերի հետ և նախորդ տողերի Վանչո-կապիտանչո-ի ազդեցությամբ դարձել փալանչո: «Փալան» բառը խաղերում ունի «հակառակորդի վրա բացասական միավոր հաշվել» նշանակությունը²⁶, ինչը, թերևս, իմաստավորում է նրա առկայությունը հաշվերգում: Փալանչո-ն հիմք է դարձել մոլոկանի պոպոնչո շարունակության համար: Փալանը ռուսերեն կլինի՝ попона (պոպոնա), որը հանգավորել են նախորդ տողերի հետ և դարձրել՝ պոպոնչո, և հավելել՝ մոլոկանի պոպոնչո, «ռուսերեն՝ պոպոնչո» իմաստով²⁷:

Իմաստավորման և վերակազմության փորձեր: Խորհրդային Հայաստանի բնակչության մի նշանակալի մասը բավարար կամ լավ տիրապետում էր ռուսերենին: Եվ նրանց համար այս հաշվերգում միանգամայն ակնհայտ պիտի լիներ ռուսական ազդեցությունը (-նիցա, կաբան-իցա, նաչ կապիտանչո): Այդ պատճառով Հայաստանում վաղուց ի վեր շրջանառվում է մի վարկած, ըստ որի, այս տեքստի սկզբի տողերն աղավաղումն են ռուսական Алла баловница Дуську боится «Հարածձի Ալլան վախենում է Դուսկայից» նախատիպի: Կարծիք է եղել նաև, որ երկրորդ տողն էլ աղավաղումն է իբր ռուսերեն русская больница «ռուսական հիվանդանոց» արտահայտության, իսկ Թբիլիսիում իրոք ասվել է՝ Ռուսերի բալնիցա (հմմտ. Ռուսերի՝ վրաց. Ռուսաստան):

Հետաքրքիր է, որ մեզանում փորձեր են արվել տեսականորեն վերականգնել այն ռուսական բնագիրը, որից պիտի ծագած լիներ Ալա-բալանիցա-ն (նաև մնացած մասը)²⁸: Չնայած այդ վերակազմությունների ակնհայտ հնարավոր բնույթին, դրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և վկայում այն մասին, որ մենք, մեծանալով, շարունակում ենք մտածել մեր մանկության մասին, փորձում հասկանալ և իմաստավորել այն:

²⁵ Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, էջ 199-200:

²⁶ Բրդյան Վ., Հայկական ժողովրդական խաղեր, հ. 2, Ե., 1980, էջ 233:

²⁷ Կա հազվադեպ տարբերակ՝ «փալանչո», որը նշանակում է «ծաղրածու, խեղկատակ» (ինչպես «Ալա բալա նիցա» ֆիլմում): Այս բառը հանգում է իտալերեն pagliaccio «պալյաչչո» (ռուս. паяц) բառին, թուրքերենի միջնորդությամբ (հմմտ. թուրք. palyazo, palyango. հին իտալերենում բառը հնչել է պալյաչչո): Հնարավոր է, որ այս տարբերակը տարածված է եղել հայրենադարձների շրջանում, որոնք, յուրացնելով տեղական հաշվերգը, անհասկանալի փալանչո-ն դարձրել են իրենց համար հասկանալի փալանչո:

²⁸ Ըստ մի տարբերակի, այն պիտի լիներ այսպիսին՝ Алла баловница/ Дуську боится./ Эй, где ты Ванька?/ Разбуди Таньку!/ Хорошо. Рул иголу վերակազմությունն այսպես է՝ Алла баловница/ жутко боится/ лезть под диванчик./ где – тараканчик и/ пая-чок! տե՛ս <http://ichbinslon.ya.ru/ replies.xml?item no=1707>: Մյուսը այսպես է՝ Алла баловница, Дуськи боится, // Эй, кинь ты Ванчо, в нас камнем так, что быть палачом..

Ինչևէ, Ռուսաստանի առաջատար մասնագետներին ուղղված հարցման շնորհիվ պարզվեց, որ Алла баловница Дуську боится ռուսական հաշվերգ, բանահյուսական կամ նույնիսկ գրական տեքստ ուղղակի գոյություն չունի: Այսինքն, այս մեկնաբանությունը, թեև շատ ճշմարտանման, բայց միանգամայն հնարավոր է, մի տեսակ «ժողովրդական ստուգաբանություն», հորինված ռուսերեն իմացող մեծահասակների կողմից, անհասկանալի տեքստը բացատրելու համար: Հետաքրքիր է, որ հնարածին հաշվերգի համար վերականգնվել է ոչ հնարածին տեքստ, բայց, այսպես ասած, հնարածին մեթոդաբանությամբ:

Բուլղարական Ալա-բալա-նիցա-ն: Մինչդեռ ալա-բալա-նիցա-ում առաջին իսկ հայացքից կարելի է բուլղարական ազդեցություն ենթադրել: Բուլղարերենում -չո-ն նվազական տարածված ածանց է, իսկ փոքրիկ Իվանը՝ Վանչո, ինչպես Դիմիտրը՝ Դիմչո, Յորդանը՝ Դանչո, կապիտանը՝ կապիտանչո: -Չո-ով վերջացող հիշյալ Գուրգենչո, Ռուբենչո ձևերը մեզանում տարածվել են համեմատաբար ուշ և չէին կարող լինել խորհրդային վաղ տարիներին, երբ արդեն հայտնի էր Ալա-բալա-նիցա-ն: Իսկ Վանչո ձև մեզանում չի եղել ու չկա: Համացանցում առկա է բուլղարական նախատիպը, որն ամենատարածված տարբերակն է՝

Ала-бала-ница,

Ալա-բալա-նիցա,

турска паница,

Թուրքական թաս (նաև՝ «խոր ափսե»),

Ой гиди Ванчо,

Հեյ գիդի փոքրիկ Իվան,

наш капитанчо!²⁹

Մեր փոքրիկ կապիտան:

Ժամանակակից բուլղարերենում ալա бала -ն ժարգոնային կամ խոսակցական արտահայտություն է՝ «անլուրջ, հիմար, անիմաստ բան» իմաստով, կա և алабализъм նորաբանությունը՝ նույն իմաստով³⁰: Մրանք, ակնհայտորեն, անբաժանելի են՝ տարբեր լեզուներում տարածված «գույնզգույն», «խառնաշփոթ», «անհեթեթություն» նշանակություններով, թուրքական ծագման նմանահունչ բառերից (թեև երկրորդի ձևավորման գործում իր դերը կարող էր ունենալ նաև մանկական հանրահայտ հաշվերգը):

Հաջորդ տողը՝ «թուրքական թաս/ ափսե» արտահայտությունը թերևս կարող է կապվել առաջին տողի՝ «խայտաբղետ խառնուրդ», «խառնաշփոթ»

²⁹ Բուլղարական գիտությունների ակադեմիայի Էթնոլոգիայի և բանահյուսության ինստիտուտի աշխատակից Գրիգոր Գրիգորովն ինձ ուղարկեց հաշվերգի բազմաթիվ տարբերակներ ինստիտուտի արխիվից (АИФ I N 451) և գրառված թանգարանի այցելուներից, իր և Կոնստանտին Պանայոտովի կողմից, 2011 թ. (2013 մարտի 17-ի և 23-ի նամակներ): Ահա երկու հանրահայտ շարունակություն՝ С пушка на рамо, с дупе насрано. Корабите спряха, турците умряха, само наш остана Ванчо капитана «Հրացանը ուսին, հետույքը կեղտոտ: Նավերը կանգնեցին, թուրքերը մեռան, մնաց միայն մեր Վանչո կապիտանը»: Դամ՝ Раз-два-три, кой излиза първи? «Մեկ-երկու-երեք, ում էլքն է առաջինը»:

³⁰ Sč'u, орինшл, Речник на българския език, т. 1, София, 1977, с. 220, Български тълковен речник, София, 1994, с. 23.

խմաստների հետ՝ (հմմտ. աջաբասնդալ «զանազան բանջարեղենների խառնուրդով պատրաստվող արնեյան կերակուր», «անկարգ խառնուրդ» իմաստով):

Հեյ գիդի արտահայտությունը, ինչպես ասվեց, թուրքերեն է և բուլղարերենում ևս օգտագործվում է նույն իմաստով (оѣ/де/дей гиди, կա նաև թուրքերենից փոխառյալ гиди «չար, չարաճճի» բառը): Այստեղ, այբուբենի առաջին՝ ա, բ, գ, դ տառերով կազմված ալա, բալա, գիդի բառերի շրջապատում Վանչո-ն կարող է ներկայացնել սլավոնական այբուբենի՝ կիրիլիցայի երրորդ՝ վ տառը:

Բուլղարիայում կա ալա-բալա-ով սկսվող ևս մեկ տարածված հաշվերգ՝ Ала бала портокала (որտեղ портокал «նարինջ» բառն ուղղակի հանգավորվել է ալա-բալա-ի հետ)³¹: Ընդ որում, այն հայտնի է և մակեդոներենում³², իսկ Ալա-բալա-նիցա-ն՝ ոչ: Բացակայու- թյունը մերձավոր՝ ազգակից լեզվում ցույց է տալիս վերջինիս առանձնահատուկ՝ բուլղարական ծագումը:

Այլ ժողովուրդների հաշվերգեր ալա-բալա տարրով: Այդ սկզբնամասով հաշվերգերը լայնորեն տարածված են Բուլղարիային հարևան Ռումինիայում և Մոլդովայում՝ Ала Бала Portocala/ Iesi Gheorghitэ la portitэ/ Сэ te-asteaptэ Talion,/ Talion, fecior de domn./ Ала бала portocala, вѢнту-ѣ zboarэ пэлярия. // Ала, бала, portocala, /Iesi, бэдиѣ, la portiѣ,/ Cэ te- аштептэ Talion,/ Talion, fecior de domn...³³ Այստեղ ևս հանդես է գալիս «Ալա-բալա նարինջը», հիշվում է և Տալիոնը՝ պարոնի որդի: Հայտնի է Լիվիու Դելիանուի մանկական բանաստեղծությունը՝ Ала-бала-портюкала, որը դարձել է մանկական բանաստեղծությունների ժողովածուի վերնագիր (ռուս թարգմ. Ала Бала запеваля)³⁴: Ալա- բալա-ն հայտնի է ce mai ala бала «ի՛նչ է կատարվում» իմաստով արտահայտության մեջ³⁵, այսինքն, հավանաբար, այստեղ ևս, այն ունի «շարժում, անկարգություն, աղմուկ» իմաստը:

³¹ Մրանցից առաջինը գրանցվել է արդեն և XIX դարում՝ Ала бала, portoo, kala,/ Estavitsa, domnar, tita,/ Tamion', tamion'/ Tchok, brok, strashni, rok (տե՛ս Bolton H. C., նշվ. աշխ. էջ 65. ներկայացվում է հեղինակի ուղղագրությամբ, մեծ մասամբ հնարածին բառեր են): Մեկ այլ տարբերակ տե՛ս Сборник за народни умотворения, наука и книжнина, София, 1892, кн. VIII, с. 260. Մյուսը հասկանալի տեքստ է՝ Ала бала портокала,/ Кой изяде кашкавала?/ Аз не съм, ти не си,/ а магарето си ти «Ալա բալա նարինջը,/ Ո՞վ կերավ դեղին պանիրը,/ Ես չեմ, դու չես,/ Բսկ էշը դու ես»: Այստեղ портокал «նարինջը» ուղղակի հանգավորվել է ալա-բալա-ի հետ:

³² Величковски Б. Македонски детски фолклор, Скопје, 2011, с. 114.

³³ <http://www.estcomp.ro/~cfg/cfgdescr.html>; <http://www.youtube.com/watch?v=8JjUIJ79-VFs>; Communication by folklore: comenius multilateral project, p. 30. www.boldog.hu/Intezmenyek/Ovi/.../CF.pdf.

³⁴ Делиану Л. Ала-бала-портокала. Кишинев, 1972, նույնի՝ Алла-бала запеваля. пер. с молд. Благинина Е., Кишинев, 1984.

³⁵ Румынско-русский словарь, М., 1943, с. 14; Молдавско-русский словарь, М., 1961, с. 27.

Ալա-բալա-ն, որպես հաշվերգի տարր, բայց ոչ սկզբում, հանդիպում է մեկ այլ բաղկանյան երկրում՝ Հունգարիայում՝ An, tan tnnusz, / Szg, raka, tnnusz, / Szg, raka, tiki, tnkn, / pln, bnln, bim, bam, busz: Որոշ տարբերակներ վերջանում են այլ կերպ՝ ala bala bambusz, կամ՝ ala-bala bambuszka³⁶ (հունգարերենում ալա-բալան իմաստ չունի, բիմ-բամը՝ զանգի հնչյունի բնաձայնությունն է, bambusz-ը նշանակում է քաղցրուկ, իսկ bambuszka-ն նույնի նվագականն է): Սա արևելաեվրոպական մի շատ հայտնի, բազում երկրներում տարածված հաշվերգ է: Ահա այլ տարբերակներ՝ En-den-dini/ sava-raka-tini/ sava-raka-tika-taka/ elem-belem-buf/ trif-traf-truf, կամ՝ ...պսպՎ, ոպսպՎ, ոցր (Մերթիա, Խորվաթիա)³⁷, En ten dem/ So raka tem/ So raka tike taka/ Ela bela boms (Ֆինլանդիա), En don dino,/ sofa la katino,/ safa la katikato,/ Elik-belik bom (Բուրայել), En den dino/ sof al hakatino/ Elik Belik Bom/ Shabat Shalom/ Un deux trois/ et vous Utes pas! (հրեական տարբերակի և ֆրանսերեն վերջավորությամբ՝ Շաբաթ շալոմ/ Մեկ, երկու, երեք/ Եվ դուք չեք)³⁸, հմնտ. և սրանցից որոշակիորեն տարբեր ոռու. элем-белем, тремкомзелем³⁹: Այս հաշվերգի արևմտյան՝ իտալական տարբերակը (En ten tini savara/ ca tini savara/ ca tica taca/ bia baia buf)⁴⁰, ինչպես և խորվաթական որոշ նմուշներ, չունեն էլեն-բելեն տարրը, ինչը ցույց է տալիս, որ այն, թերևս, գալիս է արևելքից:

Հաշվերգի առաջին հիշատակությունը գտնում են սերբ դասական գրող Բ. Նուշիչի ինքնակենսագրության մեջ՝ 1870-ական թվականներին վերաբերող հատվածում: Այն արտասանելուց հետո սերբ երեխաներից վերջինը կռանալով «թուրքական դիրք» էր ընդունում, իսկ մյուսները թռչում էին նրա վրայով, արտասանելով թուրքերեն աղավաղված բառեր (օրինակ՝ бър капаклари, бир топузлари «մեկ կափարիչները», «մեկ մահականները»)⁴¹: Սա կարող էր ակնարկել նաև հենց հաշվերգի թուրքական ծագումը, բայց այն, իր ամբողջության մեջ, թուրքական տեսք չունի: Ընդհանրապես, ալեն/էլեն-բելեն տարրը հանդիպում է թուրքական հաշվերգերում, բայց մեզ հայտնի օրինակները չէին կարող լինել եվրոպականների նախատիպը⁴² (այսինքն, եթե փոխառված է, ապա, հավանաբար, միայն էլեն-բելեն տարրը):

³⁶ Communication by folklore: comenius multilateral project, p. 47; forum.index.hu/Article/showArticle?go...; <http://www.gershon-lehrer.be/blog/2011/08/the-source-of-the-song-en-den-dino/>.

³⁷ <http://www.unilang.org/viewtopic.php?t=6698>; <https://www.filastrocche.it/contenuti/en-den-dinu-sava-raka-tinu/>.

³⁸ <http://www.gershon-lehrer.be/blog/2011/08/the-source-of-the-song-en-den-dino/>.

³⁹ Мельников М. Н. Русский детский фольклор, М., 1987, с. 136.

⁴⁰ <https://www.filastrocche.it/contenuti/en-ten-tini-savara/>.

⁴¹ <http://www.vilavi.ru/raz/nush/3.shtml>.

⁴² Հմնտ. Allem, Bellem, Chirozi, / Chirmirozi, fotozi... (Bolton H. C., նշվ. աշխ., էջ 64, գրանցված է Պոլսից, ներկայացվում է բնագրի ուղղագրությամբ. առաջին երեք բառերը հնարածին են, վերջինը թարգմանված է «ուրվական»), կամ՝ ...Biring, turung/ Elem belem/ Cicim kalem... «բրինձ նարինջ/ էլեն բելեն/ սիրուն գրիչ»: Նարինջ էլեն բելենը

Ալա-բալա-ն հանդիպում է երկու անգլիալեզու պարանախաղի հաշվերգում՝ Ala bala bushka, king of the jews և Alla balla whisky, Chinese king⁴³ («Ալա բալա բուշկա, հրեաների թագավոր», «Ալա բալա վիսկի, չինական թագավոր»)։ Անգլերենում bushka-ն հազվադեպ պենգային բառ է⁴⁴, բայց Ալա բալա բուշկա-ն հիշեցնում է նաև հունգարական ala bala bambuszka-ն (հնչում է բամբուսկա, հմմտ. և սլավոնական -yuka և հունգարական -cska (-չկա) նվագական ածանցները), հրեական թագավորի հիշատակությունն էլ կարող է կապված լինել հրեական միջավայրի հետ (հնարավոր է, որ հաշվերգի տարածման գործում որոշակի դեր են կատարել հրեաները)։ Ալա բալա վիսկի չինական թագավոր-ը կարող է լինել Ալա բալա բուշկայի «ժողովրդական ստուգաբանությունը»՝ անհասկանալի բուշկան փոխարինվել է նմանահունչ հասկանալի վիսկի-ով, իսկ «հրեաների թագավորը» դարձել է չինացի։

Ալա-բալա տարրով անգլիալեզու հաշվերգեր հայտնի են նաև Գարիբյան և Բահամյան կրգիներից՝ Intry, mintry, dibbity fig/ Dealia, dohlia, dominig/ Otchy, kotchy, dominotchy/ Alla balla boo/ Out goes you! (այստեղ առաջին մասը հանգում է այլ եվրոպական հաշվերգի) և Alla balla tingo/ The way jon kalla balla/ Alla balla walla balla oo ja ja...⁴⁵։

Շատ դժվար է պարզել այս հաշվերգերի ծագումը և տարածման ուղիները։ Մանկական բանահյուսության ուսումնասիրությունը Եվրոպայում, ինչպես և մեզանում, բավարար մակարդակի չէ՝ չկան միանշանակ պատասխաններ նմանօրինակ հարցերի համար։ Այդ պատճառով ես կսահմանափակվեմ մի քանի կարճ դիտողություններով։ Ինչպես ասվեց, բերված հունգարական հաշվերգը տարբերակներից մեկն է այն հաշվերգերի, որտեղ այլ լեզուներում ի հայտ են գալիս էլեմ-բելեմ կամ նմանատիպ արտահայտություններ (հավանաբար, արևելյան ծագման)։ Կարելի է ենթադրել, որ էլեմ-բելեմ-ը Հունգարիայում դարձել է ալա-բալա բուլղարա-ռումինական ալա-բալա-յի ազդեցությամբ։ Ալա-բալա տարրով անգլիալեզու հաշվերգերը, հավանաբար, ստեղծվել են արևելաեվրոպական ազդեցության տակ։ Իսկ Ամերիկայից հայտնիները, հավանաբար, հանգում են անգլիական նախատիպերի, բայց կա նաև արևելաեվրոպական ուղղակի ազդեցության հավանականություն։

Ակնհայտ է, որ «ալա-բալա» րտահայտությունը ծագում է նույն բնից, ինչ «էլեմ-բելեմ»-ը։ Բայց, ինչնիցե, «Ալա-բալա-նիցա»-ն ստեղծվել է Բուլղարիայում և տարածված չէ հարևան երկրներում։

հիշեցնում է բուլղարա-ռումինական ալա բալա պորտոկալա-ն, և տեսականորեն հնարավոր է, որ նրանց միջև ինչ-որ կապ լինի։

⁴³ <http://www.homeschool.co.uk/resource/jump-rope/jump-rope-rhymes.html>; http://folktrax-archive.org/menus/search%20for%20titles_my_1_z.htm.

⁴⁴ <http://www.urbandictionary.com/define.php?term=bushka>.

⁴⁵ <http://www.playgroundjungle.com/2009/12/counting-out-rhymes.html>; <http://mudcat.org/thread.cfm?threadid=27634>. Սրանց առթիվ հիշվում են առավել հեռավոր բրիտանական օրինակներ՝ oller boller, olla bolla, hally bally bee, որոնք, հնարավոր է, ինչ-որ կերպ կապված են մյուսների հետ։

Բուլղարիայից Հայաստան: Բուլղարիայում «Ալա-բալա-նիցա»-ն ամենահայտնի հաշվերգն է: Ես չգիտեմ, թե երբ է ստեղծվել, բայց այն գոյություն պիտի ունենար արդեն XIX դարում: Իսկ Հայաստանում հայտնի և շատ տարածված է եղել Երևանում արդեն 1920-ական թթ. (ինֆորմանտ՝ Մարգո Մինասյան, ծնվ.՝ 1917 թ., Երևան): Հայաստանի շրջաններից իմ ունեցած ամենահին վկայությունները 1930-ականներից են, իսկ Թբիլիսիից վկայություն կա գոնե 1940-ականների սկզբից (բանագետ՝ Սարգիս Հարությունյան), ուրեմն, եղել է և 1930-ականներին:

Ըստ Մ. Մինասյանի, իրենց բախում «Ալա-բալա-նիցա»-ն օգտագործվել է տղաների խաղերում: Գուցե դա վկայում է այն մասին, որ այն Հայաստանում ներդրվել է տղաների կողմից և նոր է սկսվել տարածվել: Ինչնից, արդեն 1930-ական թթ. օգտագործվել է և՛ աղջիկների, և՛ տղաների խաղերում: Կարելի է արձանագրել, որ հայ մանուկների ամենասիրած, ամենահայտնի և ներկայումս օգտագործվող ամենահին հաշվերգն է:

Շատ դժվար է ասել, թե երբ և ինչպես է հաշվերգը հասել Հայաստան: Բուլղարների քիչ թե շատ էական ներկայություն պատմական Հայաստանի տարածքներում չի եղել: Տեսականորեն այն կարող էր Հայաստան բերվել Բուլղարիայից հայրենադարձված հայերի միջոցով: Բայց առաջին բուլղարահայերը Հայաստան են ներգաղթել 1923 թ., այն էլ փոքր քանակությամբ⁴⁶, իսկ 1920-ականներին, ինչպես տեսանք, հաշվերգը Երևանում արդեն հայտնի էր: Ուրեմն, այն պետք է Երևան հասներ ավելի վաղ: Կարելի է կարծել, որ կարող էր Հայաստանում տարածվել 1915 թ. ցեղասպանությունից հետո, թուրքահայ գաղթականների միջոցով, որոնք օսմանյան կայսրությունում կարող էին ինչ-ինչ ճանապարհներով յուրացրած լինել նույն կայսրության մեջ բնակվող բուլղարացիների այդ հաշվերգը: Բայց դա հավանական չի թվում՝ սփյուռքում, թուրքահայերի սերունդների մեջ հաշվերգը հայտնի չէ, և Եղեռնից փրկված որբերն էլ ապրել են որբանոցներում, մեկուսացած (չափահաս գաղթականները ևս սկզբնական շրջանում որոշակիորեն մեկուսացված են եղել տեղացիներից):

Հաշվերգի ձայնաբանական համակարգը արևելահայկական է՝ արևմտահայ շատ բարբառներում և հատկապես Բուլղարիայի ու մերձակա տարածքների հայ բնակչության լեզվում չկան պ, տ, կ, հնչյունները (այլ միայն փ, թ, ք)⁴⁷: Այսինքն՝ հաշվերգը չի յուրացվել արևմտահայերեն, հետո անցել արևելահայերենին: Հայկական տարբերակը համարյա առանց աղավաղման կրկնում է բուլղարերեն տեքստը: Դա կարող է վկայել չմիջնորդավորված փոխառության մասին (հմմտ. միջնորդավորված, թբիլիսյան և ռուսական

⁴⁶ Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010, էջ 356: Այդ տարի Հայաստան է հայրենադարձել ընդամենը 1000 մարդ՝ Հունաստանից, Բուլղարիայից, Միլիթիայից և Պոլսից:

⁴⁷ Ազգագրագետ Արմենուհի Ստեփանյանի հաղորդմամբ, նրա մի հայրենադարձ ինֆորմանտը այդպես էլ արտասանում էր բուլղարական հաշվերգը (փանիցա՝ պանիցայի փոխարեն):

աղավաղված տարբերակները. տե՛ս ստորև): Այսպիսով, կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչպես պիտի բուլղարական հաշվերգը Հայաստան հասներ շրջանցելով Ռուսաստանն ու Թուրքիան, որտեղ այն չի եղել:

XIX դ. 60-70 թթ. օսմանյան կայսրությունում տեղի ունեցան մի շարք ապստամբություններ՝ 1862 թ.՝ Չեյթուն, 1975 թ.՝ Բոսնիա և Հերցեգովինա, 1876 թ.՝ Բուլղարիա, որոնք իրենց վրա բևեռեցին մարդկության ուշադրությունն ու զայրույթը՝ թուրքերի կազմա-կերպած արյունալի կոտորածների դեմ: 1876 թ. բուլղարական ապստամբության ժամանակ և պարտությունից հետո հայկական պարբերականներում լայն արձագանք է գտնում բուլղարների հերոսական պայքարը: Մամուլում հանդես են գալիս մտավորականության լավագույն ներկայացուցիչները, կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ՝ հավաքույթներ, ներկայացումներ և այլն, որոնց շնորհիվ նշանակալի միջոցներ են հավաքվում ապստամբության մասնակիցների և տուժողների օգտին: Հետագայում, Բուլղարիայի ազատագրման ժամանակ (1878 թ.) և հետո, Բալկանյան (1912-1913 թթ.) և Առաջին համաշխարհային պատերազմներին, բազմաթիվ հայեր կովել են բուլղարական բանակի կազմում (այդ թվում՝ ազգային հերոսներ Անդրանիկն ու Նժդեհը, 270 հոգանոց հայ կամավորների ջոկատով): 1896-ից բազմաթիվ հայեր համիդյան ջարդերից հետո հանգրվանում են Բուլղարիայում: Բուլղարիայում են ապաստանում թուրքական լծի դեմ պայքարող հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գործիչներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, մտավորականներ, որոնք Բուլղարիայից ղեկավարում էին իրենց կազմակերպությունները և սերտ կապերի մեջ էին տեղի իշխանությունների և տեղի մակերդոնական ազատագրական կազմակերպությունների հետ⁴⁸:

XIX դ. վերջին քառորդից սկիզբ առած բուլղարասիրական այս ալիքը, որը լայն արձագանքներ ունեցավ հայոց մեջ ամենուր, և՛ ռուսական և՛ օսմանյան կայսրություններում, կարող էր պարարտ հող դառնալ հայերի՝ բուլղարական մշակույթին ծանոթանալու համար: Ինչևէ, տեսականորեն, Ալա-բալա-նիցա-ն կարող էր Հայաստան բերվել այն հայերի երեխաների կողմից, որոնք XIX դ. վերջին և XX դ. սկզբին ապրել են Բուլղարիայում, իսկ հետո, մոտավորապես Առաջին համաշխարհային պատերազմի դարաշրջանում անցել Երեւան (գուցե և՛ Թիֆլիս): Հաշվերգի արագ տարածումը կարող է վկայել, որ այդ երեխաների ծնողները հասարակական բարձր դիրք են գրավել: Բայց սա միայն ենթադրություն է:

Հայաստանից Ռուսաստան: Տիրող՝ կայսերական ժողովրդի լեզվի և մշակույթի ազդեցությունը կայսրության մյուս ժողովուրդների վրա սովորական երևույթ է: Իսկ ազդեցության հակառակ ուղղությունը՝ հազվադեպ է: Ինչպես ասվեց, Ալա-բալա-նիցա-ն չի տարածվել Բուլղարիային

⁴⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Ղասաբյան Զ., Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Ե., 1978, էջ 5-11, նույնի՝ Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1996-1970), Ե., 1986, էջ 16-26:

հարևան երկրներում: Իսկ Հայաստանից այն հասել է ոչ միայն Վրաստան, ու տարածված է եղել հատկապես հայերի շրջանում, այլև Ռուսաստան:

Ահա տարբերակներ, գրառված Ռուսաստանում.

Ала-бала ринце,	О-ала-бала-ринце,	Эне-бене-ница!
Дунс кана фринце,	Рубски нафринце.	Русо бэз балница,
Э гидованче,	Эй, годованчо,	Эй гегеванчо
Наш капитанче	Наш капитанчо,	Наше капитанчо
Баланчо! ⁴⁹	Баманчо! ⁵⁰	Чо-чо-чо,
		Баланчо!
		Пут-пут-пут,
		Ли-ли-пут! ⁵¹

Այս հաշվերգերը Ռուսաստանում հազվադեպ են և գրանցված են ուշ: Դրանցում կան շատ աղավաղումներ՝ օրինակ, էնե-բենե՝ որը ռուսական հաշվերգերի հանրահայտ սկզբնամաս է, գիդովանչե/ գեգեվանչո՝ հեյ գիդի արտահայտությանը ծանոթ չլինելու արդյունք: Բալանչոն, ինչպես ասվել է, Հայաստանում փալանչոյի հազվադեպ տարբերակներից է: Հավանական է՝ որոշ տարբերակներ Ռուսաստան են հասել Թբիլիսիից (որտեղ եղել են աղավաղված տարբերակներ՝ բալանչո և բալնիցա ձևերով)⁵²: Փոխառության ուղղությունը Բուլղարիայից Ռուսաստան, այնտեղից Վրաստան և Հայաստան բացառվում է (բուլղարականում չկա փալանչո բառը, հայկական տարբերակը համարյա նույնական է բուլղարականին, մինչդեռ թբիլիսյան և ռուսական տարբերակներն աղավաղված են):

⁴⁹ <http://blogs.privet.ru/user/Flena/68673162>.

⁵⁰ <http://www.unn.ru/folklore/schzaum.htm>.

⁵¹ <http://www.proza.ru/comments.html?2006/08/14-257>.

⁵² Ահա թբիլիսյան օրինակներ՝ Эне-бене-ряба,/ квинтер-финтер-жаба,/ эй, гедеванчо!/ наш капитанчо!/ Баланчо! <http://bakri.livejournal.com/409462.html> (հեղինակը նշում է, որ այս հաշվերգը եղել է ամենատարածվածը Թբիլիսիում 1953-1960 թթ.). Ана-бана-ница,/ тики-рики-лица,/ ала-бала-ванчо,/ наш капитанчо,/ ба-лан-чо. <http://www.vechernitbilisi.net/item.asp?id=127>. Առաջին օրինակի առաջին տողերը ռուսական հանրահայտ հաշվերգից են, իսկ անա-բանա-նիցա-ն հազվադեպ հանդիպում է և Հայաստանում, հմմտ. և վրաց. *anabana* (ანაბანა) «այբուբեն» բառը: Այս օրինակներում երևում է թիֆլիսահայերի լեզվի և մշակույթի վրա եղած ռուսական ուժեղ ազդեցությունը:

ОДИССЕЯ ОДНОЙ СЧИТАЛКИ

ПЕТРОСЯН А. Е.

Резюме

Известная детская считалка *“Ала-бала-ница”* имеет болгарское происхождение. Болгарский текст можно перевести как *“Ала-бала-ница”* (турецкая миска, эй, где ты теперь маленький Иван, наш маленький капитан). В Болгарии, Румынии и Молдове есть и другие считалки, начинающиеся словами *“ала-бала”*. В странах Восточной Европы известны подобные считалки с элементом *“элем-белем”*. Оба элемента, вероятно, имеют тюркское происхождение. В современном болгарском языке *ала-бала* означает *“бессмыслица”*. Из Восточной Европы считалки с элементом *“ала-бала”* просочились в Британию и Америку. Трудно ответить на вопрос, каким образом она получила распространение в Армении. В Турции и России она также неизвестна. В Армении она получила распространение до репатриации армян из Болгарии в 1923 г. Среди армянских детей распространены несколько вариантов текста с разными продолжениями. В Болгарии, как и в Армении *“Ала-бала-ница”* является самой популярной и любимой считалкой.

THE ODYSSEY OF A COUNTING-OUT RHYME

A. PETROSYAN

Abstract

“Ala-bala-nitsa”, famous counting-out rhyme of the children of Armenia, is of Bulgarian origin. Bulgarian text can be translated as *“Ala-bal-nitsa, / Turkish bowl, / hey, where are you now little Ivan, / our little captain”*. In Bulgaria, Romania and Moldova, there are other counting-out rhymes with the beginning *“ala-bala”*. In the countries of Eastern Europe similar counting-out rhymes are known with the element of *“elem-belem”* instead of *“ala-bala”*. Both elements, probably, are of Turkish origin. However, *“ala-bala”* in modern Bulgarian means *“nonsense”*. Some similar counting-out rhymes with the element of *“ala-bala”* passed from Eastern Europe to Britain and America. It is unclear

how this text reached Armenia. It is not popular in Russia and Turkey and became popular in Armenia before the arrival of the first repatriates from Bulgaria (1923). In Armenia, several variants are known, with different narratives. Interestingly, “Ala-bala-nitsa” is also the most popular and favourite counting-out rhyme in Bulgaria.